ԻՐԻՆԱ ՏԻԳՐԱՆՈՎԱ. ՄԵՏԱՊԵՍ ԲԱՐԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԺՊԻՏ ՊԱՐԳԵՎՈՂ ԱՆՈՒՆ

ԱՐՄԵՆ-ԼԵՎՈՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ

Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դաշնամուրային ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

Իրինա Տիգրանովա. այս անունը պարիներ շարունակ մեզ պարգևել է ուրախություն և ժպիտ: Եվ ակամա, մեր դեմքերին արտացոլվում էր նրա ժպիտը, հենց այն ժպիտը, որը միշտ բնորոշ էր Իրինա Տիգրանովային և նրա հոգում էր: Նա կյանքին նայում էր լավատեսորեն:

Հպարտ և երջանիկ եմ, որ ինձ բախտ է վիճակվել սովորել Իրինա Գեորգիևնայի դասարանում: Նրա դասերն անցնում էին մեկ շնչով: Մենք չէինք նկատում, թե ինչպես էր անցնում ժամանակը: Նա ոչ միայն հիանալի դասավանդում էր, այլև կրթում էր յուրաքանչյուրիս: Լսելով հայտնի երաժիշտների ստեղծագործությունները, մենք ոչ միայն քննարկում, այլ նաև բանավիճում էինք, և դասը դառնում էր ավելի հետաքրքիր: Ես չեմ կարող հիշել որևէ ուսանողի, որ անհետաքրքրությամբ մտներ լսարան: Նրան ոգևորում էր ամեն ինչ, ամեն ուսանողի պատասխան, ամեն ուսանողի կատարում, բայց նաև կատարում էր դիտողություններ և տալիս տեղին ու անհրաժեշտ խորհուրդներ: Շատ կապված էր իր ամուսնու՝ Ավետ Տերտերյանի երաժշտության հետ: Ամեն անգամ փորձում էր զուգահեռներ անցկացնել ժամանակակից, հայ, արևմտաեվրոպացի և այլ կոմպոզիտորների միջև, որը էլ ավելի հետաքրքիր էր դարձնում մեր դասերը: Ես չեմ հիշում որևէ համերգ, փառատոն, մրցույթ, որին ներկա չլիներ Իրինա Տիգրանովան: Եվ անկախ մեզանից, բոլոր համերգների ավարտին կամ ընդմիջմանը, աչքերով փնտրում էինք մեր սիրելի դասախոսին. Իրինա Տիգրանովան մեզ համար դասախոսից առավել՝ հարազատ անձնավորություն էր:

Իրինա Տիգրանովայի անունը դեռ երկար կմնա մեր, նույնիսկ հաջորդ սերունդների շուրթերին, որովհետև նրա գործն անմահ է:

Ի. Գ. Տիգրանովան ողջունում է «ԵՊԿ հրատարակչության» հիմնադրման 7-րդ ամյակի առթիվ շնորհանդեսը 2010 թ. հունվարի 28-ին
Խմբագիր, երաժշտագետ և Ա. Բաբաջանյանի անվ. երաժշտական մանկավարժական քոլեջի դասավանդող Մ. Կիրակոսյան, դաշնակահարուհի Մ. Մինասյան, ԵՊԿ դոցենտ, կոմպոզիտոր և դաշնակահարուհի Ս. Միքայելյան՝ «Պոլիֆոնիկ սյուիտ» ժողովածուի շնորհանդեսը, դաշնակահար Արմեն-Լևոն Մանասերյանը կատարեց ստեղծագործություններ նաև իրականացնելով Գ. Վ. Սարաջյանի «Պիեսներ»ի ժողովածուի շնորհանդեսը:

Резюме

Пианист, студент 3-го курса фортепианного отделения ЕГК ***Армен-Левон Манасерян*** *в статье* ***"Ирина Тигранова: имя, дорящее свет и доброту"*** вспоминает добрым, благодарным словом своего педагога И. Г. Тигранову.

Summary

The pianist, YSC third-year student ***Armen-Levon Manaseryan*** speaks about his pedagogue I. G. Tigranova with kind and grateful words, whose name will remain in the students' memories during the whole life.